



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 24 ՅՈՒԻՍ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԵ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսսս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 38 ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Տէր գայրոյթիդ մէջ մի յանդիմաներ գիս, բարկութեանդ մէջ մի պարժեր գիս: Արդէն նեպերդ մարմնիս մէջ միտուեցան, հարուածներդ ծանրացան իմ վրաս: Սաստիկ բարկութեանդ իբրեւ հեպեւանք՝ մարմնիս վրայ առողջ րեղ չէ մնացած. մեղքիս իբրեւ հեպեւանք՝ հանգստութիւն չկայ բնաւ մարմնիս մէջ: Որովհետեւ անօրէնութիւններս գլուխէս վեր բարձարացան, ծանր բեռի պէս կը ճնշեն վրաս. յիմարութեանս պարճառով՝ նեխեցան ու փրեցան վերքերս: Կբաժ, ու չափազանց նուաստացած, ամբողջ օրը փրփում-փխտուր կը շրջիմ: Ներսս կարծես կրակի մէջ է. մարմնիս վրայ առողջ րեղ չէ մնացած: Ամբողջապէս ուժասպառ եմ ու խորտակուած, ցաւէս կը փնքամ՝ մոնչելու պէս: Տէր, դուն գիպես իմ բաղձանքս, եւ անպեղեակ չես հեծեճանքներուս: Միրքս կը նուաղի, ոյժերս գիս կը լքեն, եւ աչքերուս լոյսը կը մարի: Բարեկամներս եւ ընկերներս հեռու կը մնան՝ հիւանդութեանս պարճառով. նոյնիսկ հարազատներս ինձմէ հեռու կը մնան: Իսկ անոնք՝ որ իմ մահս կը կամենան, անոնք թակարդ կը լարեն, կործանումս ու գողները՝ սպառնալիք կը րեղան, եւ օրն ի բուն նենգութիւններ կը խորհին: Ես խուլ կը մնամ անոնց դիմաց, ու չեմ լսեր, համր կը մնամ, ու բերանս չեմ բանար: Այո, չեմ լսեր, ոչ ալ կ'ուզեմ պարասխանել: Բայց ես, ով Տէր, յոյսս քու վրայդ դրած եմ. անոնց դուն ինքդ պիտի պարասխանես, Տէր, իմ Աստուածս: Կը խնդրեմ, Տէր, թոյլ մի րար որ վրաս խնդան՝ երբոր ուրքս սայթաքի, իրենք զիրենք յաղթող չարծեն: Արդարեւ ահա իյնալու մօտ եմ, եւ ցաւս միշտ ներկայ է: Կը խոստովանիմ անօրէնութիւնս, կը գղջամ մեղքիս համար: Թշնամիներս ողջ-առողջ են ու զօրաւոր, բազմաթիւ են գուր րեղ գիս արողները: Անոնք որոնք բարիքներուս փոխարէն չարով կը հարուցանեն, կը հակառակին ինձի՝ որովհետեւ բարիին կը հեպեւիմ: Մի լքեր գիս, Տէր, ով Աստուածս, հեռու մի մնար ինձմէ: Շուրով օգնութեան հասիր ինձի, ով Տէր, իմ փրկութիւնս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹԵ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Ասկէ առաջ անդրադարձանք, որ Սաղմոսները փարբեր բնոյթի, փարբեր կացութեանց, փարբեր իրավիճակի մէջ մարդուն ներաշխարհը պարկերացնող աղօթքներ են առ Աստուած: Այսօրուան Սաղմոսն ալ ողբի եւ օգնութեան կանչ է, որպէսզի Աստուած Իր ողորմութեամբը նայի մեղաւոր մարդուն եւ ոչ թէ բարկութեամբ կամ զայրոյթին մէջ: Այս Սաղմոսը նաեւ կը ներկայացնէ մարդուն գիպակցութիւնը հանդէպ իր կապարած մեղքին ու իր մեղաւորութեան: Բան մը որուն ընդհանրապէս մարդ արարածը չուզեր անդրադառնալ: Անոր մէկ լաւագոյն օրինակը, որ ժառանգաբար հասած է մեզի մեր նախահօր ու նախամօր կողմէ: Դրախաբի պարսկէզին մէջ երբ Ադամն ու Եւան կերան, փոխանակ խոստովանելու եւ ընդունելու, ընդհակառակը այդ բոլորը դրին Աստուծոյ վրայ, մեղադրելով զԱստուած Ինքը որպէս պատճառ այդ բոլորին: Այսօր ալ նոյն վերաբերմունքը ունինք մենք, ըսելով, «Եթէ Աստուած գիպէ, ինչո՞ւ դրաւ այդ ծառը այդպէս: Թող չդներ, գիպէր որ մարդը պիտի ուրբէ, ինչո՞ւ դրաւ»: Փոխանակ անդրադառնալու, որ Աստուած մեզի ազար կամք արած է, եւ մենք այդ ազար կամքով ընտրութիւն ընելու: Կարգ մը փեղեր յանկարծ կ'ըսենք ու կ'արտայայտուինք, մենք ազար ենք, մեր ուզածը կրնանք ու կ'ուզենք ընել: Յանկարծ այս անգամ կը դժգոհինք, ըսելով, հապա Աստուած ինչո՞ւ մեզ ազար ստեղծեց: Ամէն պարագային, այսպէս Սաղմոսերգուն կ'անդրադառնայ մեղքի գիպակցութեան, ու մանաւանդ՝ մեղքին պատճառած ազդեցութեան ու անոր ծանրութեան: Որովհետեւ յաճախ մեղք կոչուածը կ'առնենք կամ որպէս թեթեւակի բան մը, եւ կամ ընդհանրապէս զայն կ'առնենք որպէս բնական երեւոյթ, եւ չենք ալ ուզեր անդրադառնալ: Մոռնալաով անոր ունեցած ազդեցութիւնը մեր վրայ, ու մանաւանդ՝ Աստուծոյ ու մեր կապին Աստուծոյ հետ: Ահա թէ Սաղմոսերգուն ինչպէս կը ներկայացնէ իր ներքին հոգեվիճակը եւ մեղքին պատճառած ցաւն ու ոզդեցութիւնը:

1 հմր Դաւիթը կը գիպակցի, որ իր մեղքը Աստուծոյ զայրոյթը կրնայ բորբոքեցնել եւ բարկութիւնը շարժել: Այնպէս ինչպէս ծնողքը մը, երբ կը փեսնէ զակին կամակորութիւնը, անոր սխալ ընթացքի մէջ ըլլալը, անտարբեր չի կրնար մնալ այդ երեւոյթին դիմաց, ընդհակառակը կը բորբոքի, եւ այդ բորբոքումը ի սեր այդ զակին, որովհետեւ այդ սխալ ընթացքը դէպի կործանում է որ կը փանի մարդու: Նոյնն է նաեւ պարագան Աստուծոյ: Աստուածաշունչը յարակօրէն կը ներկայացնէ ըսելով, Աստուած մեղաւորին մահը չուզեր, այլ անոր դարձն ու փրկութիւնը: Աստուած մեղքը կ'ապրէ: Աստուած իմանալով թէ մարդուս այս սխալ ընթացքը ուր կրնայ առաջնորդել մարդս: Հետեւաբար, Աստուծոյ բարկութիւնը կամ զայրոյթը անոր համար է: Դաւիթ կը գիպակցի որ մեղքի Աստուծոյ զայրոյթը կրնայ բորբոքեցնել, հետեւաբար կը խնդրէ որ բարկութեամբ չի նայի, այդ Սաղմոսի աւարտին կը խնդրէ որ ողորմութեամբ նայի:

2 հմր Ան նաեւ կ'անդրադառնայ որ արդէն իր մարմինին մէջ միտում նետեր կան, հարուածներ կան: Այդ նետերն ու հարուածները մինչ այդ յիշեցումի համար են, ապաշխարութեան առիթ փալու մեղաւորին:

3 հմր, Դաւիթ նաեւ կը գիպակցի, որ մեղքը անհանգիստ վիճակ պատճառած է:

4-5 հմր Ան կը գիպակցի, որ իր ըրած անօրէնութիւնը յիմարութեան պատճառով է, եւ այդ անօրէնութիւնը գրոյտէն վեր բարձրացած են եւ ծանր բեռի պէս կը ճնշեն վրան:

6-8 հմր մեղքի ծանրութենէն կ'ըստ, նուաստացած ամբողջ օրը փխտուր փրփում կը շրջի: Ներսը կրակ ըլլար կարծես: Ուժասպառ եւ խորփակուած:

9-10 հմր Դաւիթ ոչ միայն կը գիպակցի իր մեղաւորութեան, այլ՝ ան նաեւ կը գիպակցի, որ Աստուած ալ փեղէկ է եւ գիպէ անոր բաղձանքը, փափաքը, փեղէակ է նաեւ անոր հեծեծանքին: Հետաքրքրական արտայայտութիւն մըն է, «Աչքերուս լոյսը կը մարի»: Այսինքն՝ յարակապեցութիւնը: մեղքը ուրեմն պատճառ կ'ըլլայ որ յարակապեցութիւնը կորսուի:

11 հմր, մեղքը նաեւ կը հիւանդացնէ մարդս: Ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաեւ մտքով եւ հոգիով, եւ իբրեւ այդպիսին բարեկամները կրնան իրմէ հեռու մնալ:

12 հմր Իսկ ուրիշներ ալ կան իր մահը կը փափաքին եւ թակարդ կը լարեն եւ կործանումը կ'ուզեն, թէ երբ պիտի կործանի:

13-14 հմր իսկ ինք խուլ եւ համր կը մնայ անոնց դիմաց, այսինքն՝ ականջ չի փար ըսի ըսաներուն, եւ երկրորդ՝ ինքզինքը պաշտպանելու դերին մէջ չէ, որովհետեւ նախ արդարանալիք բան մը չունի, բայց ամենակարեւորը, իր արդարացումը կը սպասէ նոյնինքն՝ Աստուծմէ:

15-16 հմր, որովհետեւ իր յոյսը դրած է Աստուծոյ վրայ, եւ ոչ թէ ինքզինք արդարացնելու ճիգին: ուստի կը խնդրէ, որ Աստուած ինք պատասխան փայ, եւ թոյլ չտայ որ անոնք իր վրայ խնդան երբ սայթաքի:

17-18 հմր, Դաւիթ կը խոստովանիմ իր մեղաւորութիւնը, խոստովանութեան օգտակարութիւնը մեզ ոչ թէ նուաստացնելու համար է, այլ խոնրահեցնելու, ու մանաւանդ՝ առիթ բժշկութիւն խնդրելու: Այնպէս ինչպէս երբ հիւանդ ենք եւ կ'ուզենք բժշկի երթալ, ուրիշ բան չենք ըներ եթէ ոչ կը խոստովանինք բժշկին մեր ցաւերը, որպէսզի բժշկին ալ մեզ դարման փայ:

21-22 հմր, անգամ մը եւս կը խնդրէ Աստուծմէ, որ չքէ զինք, եւ հեռու չմնայ, այլ շուրջով հասնի օգնութեան, որովհետեւ Աստուած է իր փրկութիւնը:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**